

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ  
ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ԶՈՐԱՎԱՐ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ  
ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ**

«Յանուն Հօր ևս Որդոյ ևս Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Բանք միայն դադարկ են,  
այլ գործ պիտոյ է ընդ բանին»:

Սիրելի հավաքավոր ժողովուրդ հայոց.

Հանուն Հայրենիքի և հավաքի շար մարտեր են մղել մեր նախնիք: Հաղթանուն այդ հերոսամարտերի շարքում մենք սրբորեն հիշատակում ենք 1918 թ. Մայիսյան դյուցազնամարտումը, որի քաջարի զինվորն իր բազկով, արյամբ ու ապրելու իր կամքով կերպեց մեր ժողովուրդը Մարդարապատում, Ապարանում և Վանաձորում՝ ծնունդ տալով Հայոց առաջին Հանրապետությանը:

Անկախության այս թանկ օրը մեր կյանքում այսօր նշանավորվում է Զորավար Դրաստամատ Կանայանի աճյունի ամփոփումով Մայր Հայրենիքում: Տասնամյակների փարագրությունից հետո ինքնիշխան մեր ժողովուրդը երախտագետ իր սիրով ընդունում և արժանին է մատուցում իր որդուն, որ աներկմիտ նվիրվեց Հայաստանի ազատագրության ու անկախության սրբազան գործին:

Ժողովուրդը չի սխալվում իր սիրտ մեջ, բանգի շռայլ չէ իր գնահատականներում: Արդարև, Դրաստամատ Կանայանը անձնական ողջ կյանքը որպես ընծա մատուցելով մեր ժողովրդին՝ արժանացավ հայրենյաց պաշտպանի պարվին, հաղթապսակ մարտերով՝ անպարտելի լինելու համբավին: 82 տարիներ առաջ, երբ միայնակ, հերոսական ճիգով հայությունը դիմակայում էր մահ ու ավեր սփռող թուրք նվաճողներին, Ապարանի բարձունքներում փայլեց Դրաստամատ Կանայանի գորավարական փառանդը, և փառաբանվեց նրա անունը, որ արդեն հայրենի էր «Դրո» ձևով: Մայիսը մեկ անգամ ևս վկա եղավ մահվան դեմ հանդիման կանգնած սիրանքին հայոց, որ Վարդանանց ոգով կարող գտնվեց օրհասը փրկության վերափոխել: Կանգնած Հայոց առաջին Հանրապետության ծննդյան ակունքներում, հմուտ, երկաթյա կամքով զորահրամանատարը Հանրապետության կարճատև գոյության ամեն օրը «արութեան գործերով» փառավորեց՝ պաշտպանելով Հայրենիքի սահմանները Բագրատաշենից մինչև Զանգեզուր, Սուրմալուից մինչև Արցախ:

Այսօր մեր ժողովուրդը՝ աշխարհական և հոգևորական դասերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսեխորան Տաճարից խնկարույր աղոթքով դեպի Ապարանի հաղթական բարձունքն է ճանապարհում իր զավակին: Երկարամյա հարկադիր բացակայությունից հայրենի տուն դարձավ ազատության և հայոց անկախության ջահակիրներից ևս մեկը՝ իր և իր սերնդակիցների սերը, հաղթելու կամքը, հայոց գալիքի հանդեպ աներկբա հավաստի փոխանցելու մեզ:

Արդարև, կյանքը Զորավարի վկայություն էր, որ «Բանք միայն դադարի են, այլ գործ պիտոյ է ընդ բանին»: Վերադարձը նրա թող արթնացնի այս ճշմարտության արժևորումը հայորդյաց հոգիներում: Թող Դրաստամատ Կանայանի և իր զինակիցների անմար հիշարարկը հայրենյաց ծառայության բոցավառ ոգով հաղթանակների նոր հավաստ պարգևի հայրենաբնակ մեր ժողովրդին և նորոգի ազգային մեր միաբանությունը ի սփյուռս աշխարհի: Հայրենիքը միշտ կանչում է: Հայրենիքը հավերժական կանչ է: Հայրենիքի ազատության և բարօրության համար նրա մշտական սիրով կյանքը գործ դարձրած զավակունք շարունակ վերադառնում են:

Թող Բագուսդորմն Աստված հայրենի ազապ հողում, Արագածի սեզ փեշերին, Սուրբ Լուսավորչի աղոթախոս անմար Կանթեղի ներքո հանգստություն պարգևի Զորավարի հոգևած ոսկորներին և մխիթարություն՝ հայրենակարոյ նրա հոգուն:

Օրհնություն և խաղաղություն Զորավար Դրաստամատ Կանայանի հայրենադարձ շիրիմին:

«Յիշարարկն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամեն: